ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԵՏ

0051 ք. Երևան, Կոմիտաս 49/3
հեռ. (+374 10) 201461

/25.8/47064-2022
24.10.2022թ.

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ
ՆԱԽԱԳԱՀ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ
(ք. Երևան, Փ.Բուզանդի փ., 1/3, 4-րդ հարկ)
foi@foi.am

Հարգելի տիկին Դոյդոյան,

Ի պատասխան 2022 թվականի հոկտեմբերի 24-ին էլեկտրոնային հարցումների միասնական հարթակին ուղղված Ձեր հ. 652792 առցանց դիմումին կցած 22.10.2022թ.-ի թիվ 350-72 գրության՝ տեղեկացնում եմ, որ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 61-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ***«Առանց պետական տուրք վճարելու*** *տեղեկատվական համակարգի միջոցով գործակալության պաշտոնական կայքից հասանելի են իրավաբանական անձի, անհատ ձեռնարկատիրոջ և պետական մարմնի վերաբերյալ պետական միասնական գրանցամատյանի հետևյալ տեղեկությունները.*

1) անունը, ազգանունը կամ անվանումը և կազմակերպաիրավական ձևը.

2) պետական գրանցման (հաշվառման) ամսաթիվը.

3) պետական գրանցման (հաշվառման) համարը.

4) հարկ վճարողի հաշվառման համարը.

5) ձեռնարկության կոդային դասակարգիչը (ՁԿԴ).

6) գտնվելու վայրը կամ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հասցեն.

7) իրավաբանական անձի իրական շահառուի անունը, ազգանունը, քաղաքացիությունը, իրական շահառու դառնալու ամսաթիվը, իրավաբանական անձի իրական շահառու հանդիսանալու հիմքերը.

8) տեղեկություններ լուծարման գործընթացում գտնվելու մասին կամ հաշվառումից հանվելու մասին»:

Ելնելով վերոգրյալից, տեղեկացնում եմ, որ իրավաբանական անձանց իրական շահառուների հայտարարագրերի վերաբերյալ տեղեկությունները տրամադրվում են առանց պետական տուրք վճարելու:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ

ԼԱԼԱ ՆԵՐՍԵՍՅԱՆ

Կատարող՝ Լաուրա Բաղրամյան
Տեղեկատվության մշակման բաժին
Հեռ. (+374 10) 201435